ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
18.01.2023թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/20-4 ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան «02» Հունիս 2023թ.

«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Ադամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Սթերիհոմ» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Ա. Աղաջանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 18.01.2023թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/20-4 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել այն, որ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են: Ֆինանսական միջոցները հատկացվելու են սահմանված կարգով ապրանքն ընդունելու օրվան հաջորդող 90 օրվա ընթացքում և վճարումն իրականացվելու է 5 աշխատանքային օրում:

1.2 Սույն համաձայնագրի դրույթները տարածվում են Կողմերի միջև 18.01.2023թ.-ից ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ
«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն»
ՓԲԸ
ք. Երևան, Արմենակյան 108/4
ՀՎՀՀ 01508793
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150001612200100
Մ. Ադամյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Սթերիհոմ» ՍՊԸ
ք. Երևան, Տերյան 105/1, Ցիտադել Բ/Կ,
6-րդ հարկ, 606 սենյակ
ՀՎՀՀ 00219934
«Ակբա Բանկ» ԲԲԸ
Հ/Հ 220311962918000
armine@steritech.am 041-55-00-80
Ա. Աղաջանյան

(ստորագրություն)
Կ.Տ.